




ՀԱՅԿԱՅԻՆ ԵՐԱՅԻՆ

ՄԲ ՁԱԳՄԱՅԻՆ

ԿՐԹԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿՐԱԿԱՆ

ԵԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ



2/3

ՀԱՍՈՒՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ
ՀՈՌԿՄ

ԵՍ ԵՐ
ՔԵՆԱՆ
ՏՈՒՐՈՅ
ԿԵԿԵՐ

1. Կաթողիկէ Արձագանգը առ այժմ կը հրատարակուի ի Հռոմ: Առաջին վեցամսեայի բաժանորդագիւնն է մեկ մեծիս անոնց հաւեար որ ի Կ. Պօլիս Կաթողիկոսարանի մէջ, իսկ ի գաւառն՝ Եպիսկոպոսարաններու կաւ Առաջնորդարաններու մէջ կ'ուզեն բաժանորդագրուիլ: Ուղղակի Հռոմ դիւելոյ հաւեար՝ Չորս (4) փրսւի է: Հասցեն է. Collegio Armeno, 31 S. Nicola da Tolentino. Roma — Երբ ի մօտ Կ. Պօլիս փոխադրուի, ծառայել ու ձեռք, ինչպէս նաեւ բաժանորդագրութեան պայմանի վերջնականացիս պիտի ճշդուին: — Մեկ քիւր՝ մեկ դասեկան է:
2. Արձագանգը կը հրատարակուի Եաքաք օրերը:
3. Խնքագրութիւնս պատշաճորեայ չէ անպատճառ կամ նոյնութեան հրատարակելոյ իրեն դրկուած ո՛ր է յօդուած:
4. Ստորագրեայ յօդուածոց պատասխանատւութիւնը ամբողջովին կը մնայ գրողներուն վրայ:
5. Նամակ եւ յօդուածներ կը դրկուին ուղղակի խնքագրութեան:
6. Ձեռագիրներ եւ չեն դարձուիր:
7. Ծանուցանց հաւեար մասնաւոր պայմանադրութիւն կը կատարուի:



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆՔ

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ


Առաջին Տարի

25 Նոյեմբեր 1911

Թիւ 23.

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԺԱԿԱՆ ՍԻՆՆՈՂՈՍ

Ի ՀՌՈՎ Մ



Վերջին Կիրակի, 19 ամսոյս, Ազգային Պատրիարքական Սիննոդոսն իւր Զորրորդ Նիստը գումարեց յեկեղեցւոյ Ս. Նիկողայոսի ի Հռոմ: Նիստին ներկայ գտնուեցան համօրէն Հարք: Պիտի վճռուէր Երրորդ Տիտղոսը, Յաղագս իտրհրդոց:

Առաւօտեան ժամը 8ին հանգիստպէս Զայնաւոր Պատարագ մատոյց Ատանայի նորրնտիր վիճակաւոր Արհի. Յարութիւն Եպ. Քէքլիքեան: Հապառակ անձրեւոտ օդոյ բազմութիւն լեցուցած էր եկեղեցին: Ներկայ էին Ամենապ. Հոգեւոր Տէր և բոլոր Հարք:

Յաւարտ Պատարագի, ի գատու կատարուեցան սովորական Մաղ-

թանճներն, և Հարք զգետաւորնալ յառաջացան ի Սինոդալայրն ու բազմեցան իրենց Աթոռներուն վրայ:

Փրանկիսկեանց Կարգէն Վերապատուելի Հայր Սեւերիանոս Մանպրինի եկեղեցւոյ Ս. Խորհուրդներուն վրայ փառաւոր քարոզ մը խօսեցաւ, որ և խորապէս ազդեց բոլոր ներկաներուն և խորին տպաւորութիւն ձգեց: Եւ որովհետեւ բոլոր մեր հաւատացելոց համար հոգեւորական մեծ օգուտ և մխիթարութիւն կրնայ ըլլալ անոր ընթերցումը, հետեաբար թերթիս մէջ թարգմանելով պիտի հրատարակինք զայն:

Քարոզէն վերջը եկեղեցին պարպուելով, Սիւնհոգոսը շարունակեց իր Նիստը, որ լմնցաւ ժամը 11 ուկէսին:

ՔԱՐՈՉ Ս. ԽՈՐՀՐԴՈՑ ՎՐԱՅ

Բնական կարգի մէջ հարկաւոր է մեզ Աստուծոյ ձեռնտուութիւնը՝ օգնելու համար մեր մտքին ու մեր կամքին տկարութեան, և վերանորոգելու համար մեր նախկին անկումին աւերը. նոյնպէս գերբնական կարգի մէջ ալ հարկաւոր է, զմեզ բարձրացնելու համար մեզմէ վեր՝ մինչև ի փառս և յերջանկութիւն, զոր Աստուած պատրաստեց մեզ գերեզմանէ անդին:

Յիսուս Քրիստոս է որ շահեցաւ մեզի համար այս պարգեւը, և իր չարչարանքներով ու մահուամբը ապահովցուց մեզ անոր անկոյնէն ժառանգութիւնը:

Այս ձրի պարգեւը մերժուած չէ մէկու մը՝ Մարդն-Աստուծոյ գալստենէն ո՛չ առաջ և ո՛չ վերջը. սակայն ձրի ըլլալուն համար իսկ՝ անհաւասար է այնու Ոմանք ունին միայն բաւական շնորհք. այլք կ'ընդունին ազդեցիկ շնորհք. ամէնքն ապառ կը մնան մերժելու կամ ընդունելու զանոնք: Եթէ մարդը դատապարտուելու ըլլայ, շնորհաց դիմադրելուն համար է. եթէ մարդը փրկուելու ըլլայ, շնորհաց գործակցելուն պատճառաւ է:

Մարդն որ կը խնդրէ և կ'ընդունի Աստուծոյ օգնութիւնը, պիտի փրկուի. մարդն որ զայն կ'արհամարհէ ու կը մերժէ, պիտի դատապարտուի:

Ընդունեցէ՛ք զայն, ու պիտի տեսնէք շնորհաց հրաշալի արդիւնքը:

Այն կ'իջեցնէ մեր մէջն զՀոգին Սուրբ, և երեք աստուածային Անձանց սերտ միութեան պատճառաւ՝ Ս. Երրորդութիւնը կուգայ ու կը բնակի մեր հոգւոյն մէջ: Այս աստուածային օծութեամբ առլի՝ կամքը կը դառնայ հլու և հպատակ այս յանկարծական լուսով ճառագայթեալ բանականութիւնը՝ որ շատ բաներու մէջ կը զգար միշտ իւր կարճատեսութիւնը, կը տեսնէ զԱստուած և մինչև առ Նա կը սաւառնի:

Շնորհքն է որ ծնաւ մարտիրոսները, անապատականները, կոյսերը, վարդապետները, և Քրիստոնէութեան բոլոր զիւցաղունքը:

Շնորհքն է որ հանապազօր կուտայ ընտանիքի՝ այն առաքինութիւնները, որ զինքը մեծարելի կ'ընեն, մարդկութեան՝ այն կատարելութիւններն ու վեհութիւնն ու մեծամեծ գործերը որ կը կազմեն անոր երջանկութիւնն ու փառքը:

Այս գերբնական գործոյս մէջ ամենայն ինչ կը յենու Տեսուն մերոյ Յիսուսի Քրիստոսի արժանեաց վրայ. ամենայն ինչ կը մեկնի ու կուգայ Գողգոթայէ. բայց կը մնայ մերձեցնել հոգիներու՝ այն անսահման արդիւնքները, և թափել անոնց վրայ այս Արիւնը, որ վերստին կը ծնուցանէ և կը բեղմնաւորէ: Այս է խորհրդոց առարկայն:

Գողգոթայն աղբերակնն է շնորհաց, և խորհուրդք անոր խողովակներն են:

Պիտի ճառեմ խորհրդոց վրայ ընդհանրապէս Գնահատելու համար այս աստուածային կարգադրութիւնը, որ սահմանուած է մերձեցնելու մարդոց՝ Աստուածամարդոյն չարչարանաց կենդանարար պտուղները, պիտի բաւէ ինձ պատասխանել Քրիստոնէական-վարդապետութեան սա պարզ հարցումին. — Ինչ է խորհուրդ:

Մեկնաբանած պահուս պիտի ապացուցանեմ թէ ամենայն դիւրութեամբ հաշտելի են այս պարզեաներն և մեր բնութեան պահանջներն ու բանականութիւնը: Բաւական պիտի ըլլայ այս՝ մեր կուրծքերէն հանելու սիրաբորբոք երգն երախտապարտութեան առ Տէր:

Իմաստուն ունկնդիրներու հալիրն խօսք, ըմբռնելու համար իմ մտածումս:

Ինչ է խորհուրդ:

Անտեսանելի շնորհաց տեսանելի նշանն է, հաստատուած մեր Տէրն Յիսուս Քրիստոսէ, և որ ունի զօրութիւն յառաջ բերելու շնորհքը:

Խորհուրդներով է որ, ըստ վարդապետութեան Տրիտենդեան Ժողովոյ, ամէն ճշմարիտ արդարութիւն կը սկսի, կամ սկսածը կ'անի, կամ երբ կորսուի՝ կը գտնուի:

Մկրտութիւնն ու Ապաշխարութիւնը՝ կորոնցնողներուն դարձեալ կը պարգևեն այս հոգեւորական ու աստուածային արդարութիւնը, անցունելով զանոնք կամ սկզբնական կամ անձնական մեղքի մահէն ի կեանս շնորհաց, և ասոր համար է որ կը կոչուին խորհուրդք մեղեղոց:

Մնացեալ հինգ խորհուրդներն՝ այսինքն, Դրոշմ, Հաղորդութիւն, Վերջին Օծում, Կարգ Քահանայութեան եւ Պապ, կուգան յաւելուլ ու կատարելագործել այս գերբնական արդարութիւնը որ վերանորոգուեցաւ Մկրտութեամբ և Ապաշխարութեամբ, և ահա ասոր համար է որ կը կոչուին խորհուրդք կենդանեաց:

Եօթն խորհրդոց մէջ կան երեք հաս՝ որ հոգւոյ մէջ կը գրոշմեն անջնջելի կնիք, և որ կուտան անոր ճշակաման յասկութիւն մը: Մկրտութեամբ կ'ըլլանք Քրիստոնեայ և որդիք Յիսուսի Քրիստոսի ու Սուրբ Եկեղեցւոյ. Դրոշմով կ'ըլլանք կատարեալ Քրիստոնեայներ և զօրականք Յիսուսի Քրիստոսի. Սուրբ Կարգն ընդունելով, կ'ըլլանք Քահանայք Յիսուսի Քրիստոսի. այնպիսի յասկութիւններ որ չեն կրնար կրկնուիլ օրինաւոր ու վաւերական կերպով, որովհետեւ զանոնք ընդունողը չկրնար անոնց կնիքը կորսնցնել: Յիսուսի Քրիստոսի որդին, զօրականը, քահանայն այնպէս են և այնպէս պիտի ըլլան ամեն դարերու մէջ, ի ժամանակի և ի յաւիտենականութեան:

Խորհրդոյ մը նիւթն ու ձեւը էական մասերն են որ կը մտնեն անոր կազմութեան մէջ:

Նիւթի անուան տակ կ'իմացուին այն իրերն և արտաքին գործերն որ կը գործածուին խորհուրդ մը մատակարարելու համար: Ձեւի անուան ներքեւ կ'իմացուին խօսքերն զորոնք պաշտօնեայն կ'արտասանէ մերձեցնելով նիւթը:

Այս է Տրիտենդեան Ժողովոյ վարդապետութիւնը. խորհրդոյ մը հոգիներ կը կայանայ նիւթի ու Ձեւոյ մէջ: Սակայն Ժողովը միայն գործածեց Ս. Թովմասի խօսքերը. « խորհուրդներու մէջ խօսքերը կ'առնուին մէկի եւ իրերը նիւթի անուան »:

Ս. Օգոստինոսի առածը միեւնոյն զաղափարը յառաջ կը բերէ հռչակաւոր ձեւ մը տակ. « խօսքը կամ քանն կը միանայ արդիւն եւ յառաջ կուգայ խորհուրդ մը »:

Նիւթական տարրերն որ կը մտնեն խորհրդոց կազմութեան, են՝ ջուր, որ իբրեւ թէ բոլոր բնութեան յատակն կամ ենթանիւթն (substratum) է. մէկ և քաջասն, որ օդոյ մէջ քաղցր ըսյո մը կը տարածէ. հաց, որ երկրի բերք մըն է և անոր անդաւրար ոյժը կ'արտայայտէ, գինի, որ կը կազդուրէ մարդուն մարմինը և կը ղուարթացընէ անոր հոգին: Անոնք կը խորհրդանշեն (symboliser) բոլոր ստեղծագործութիւնը, և բնութեան կազդէն զինգ կը բարձրացնեն շնորհաց կարգին, Աստուծոյ հզօր ձեռքին տակ և արդեամբք Յիսուսի Քրիստոսի:

Խորհրդաց թիւն իր մէջ ունի սրբազան բան մը որ կը ստորագծէ Աստուծոյ ու մարդու վերահաշտութիւնը:

Ուղղափառ հաւատքի մեկ մասն է թէ նոր օրինաց խորհուրդները եօթն են թուով: Այս եօթն խորհուրդները՝ իրենց ամբողջութեան մէջ, կը կազմեն հիմնալի ներդաշնակութիւն մը և կը յարմարին կեանքի ամէն փուլերուն (phases): Անոնց հինգը կոչուած են անհատականք, և կուտան մեզ, կամ նորէն կը շահեցնեն կամ կ'աճեցնեն շնորհքը: Միւս երկուքը ո'չ միայն կը սրբացնեն անհատը, այլ նաև կը ծառայեն ու կը կանոնաւորեն ընկերական կեանքը ի գերբնական կարգի:

Նոյնպէս ի հաւատոց է որ Տէրն մեր Յիսուս Քրիստոս հաստատեց խորհուրդները: Ս. Գիրքը կը վկայէ ասոր. աւանդութիւնը կը հաստատէ զայն. շատ Եկեղեցիներ սը կաթողիկէ Եկեղեցիէն բաժնուած են, այս կարգադրութիւնը պահեցին, և այս կերպով կը վկայեն անոր հնութեան և անոր ծագումին: Երբ Ս. Գիրքը, աւանդութիւնը, Ս. Հաւքը, պատմութիւնը՝ չերաշխաւորէին զայս, մենք սակայն զեռ պիտի հաւատայինք անոր, քանզի Աստուծոյ բարութիւնը կը թելադրէ մեզ այդ աստուածային հաստատութիւնը, զոր, միւս կողմանէ, կը պահանջեն նոյն իսկ մեր պէտքերն:

Այսպէս են խորհուրդները:

Մէկը միւսէն կը տարբերի իրենց սեպհական առարկայով, իրենց մասնաւոր նշանակով և իրենց յարաբերական գերազանցութեամբ. բայց ամենուն մէջ կան երկու էական ու հասարակ յատկութիւններ: Նախ կայ անսուծային ներգործութեանց զգայական սրտկեր, աշխիճ՝ նշանակուած շնորհք. յետոյ կայ հոգւոյն պարգևեալ արդարութիւնն ու արդարիւնը, այսինքն՝ իրապէս արդիւնաւորեալ շնորհք:

Արդ, այս կրկին նկատողութեան ներքեւ ալ խորհուրդը, ո'չ միայն բանականութեան հակառակ չկրնար ըլլալ, այլ և ամենամաքուր արտայայտութիւնն է գերազոյն իմաստութեան օրէնքներուն և համարձակապէս յասպարէզ կը կոչէ մարդկեղէն հետապնդութիւնը:

Ամենաբանաւոր բանն է որ Աստուած խօսի մարդու նշանակներուն միջոցաւ, և անոր աչացը առջեւ ներկայացնէ, զգայուն և նիւթական կերպով, այն անտեսանելի հրաշալիքն զոր Նա կը կատարէ անոր հոգւոյն մէջ:

Իւր սեպհական բնութեանէն իսկ հաստատուած օրէնք մըն է մարդու որ զինքն կազմող գոյացութիւնները իրարու վրայ ներգործեն և մին միւսոյն փոխադարձաբար օժանդակեն:

Մարմինը պիտի չկարենայ շարժիլ առանց հոգւոյն կամաց. իսկ հոգին իւր կողմանէ՝ կը գործէ մարմնոյ միջոցաւ և մարմնոյ հետ ի միասին:

Հոգւոյ ու մարմնոյ միջև կայ ամենասերտ միութիւն մը, ամենանուիրական կցորդութիւն մը, որոյ կապերը ուրիշ բան չկրնար խորտակել եթէ ոչ մահը: Բայց այս միութիւնն կը ստիպէ զմեզ տալու մեր զգացմանց ու մեր մտածութեանց մարմին մը որ զանոնք զգալի կ'ընէ: Մեզի համար հարկաւոր է զանոնք կերպով մը մարմնաւորել նիւթական տարերաց մէջ: Այսպէս խօսքը, գրութիւնը, շարժուածքը, ամէն օր և ամէն վայրկեան մեր գործածած նշանները՝ հրամայողաբար կը պահանջուն ըսելու համար ուրիշներու, և հրեմն մենք մեզի ալ, ինչ որ կը մտածենք, ինչ որ կ'ուզենք, ինչ որ ենք: Ամենայն ինչ կը յենու զգալի նշաններու վրայ, և անոնց պէտքը այնպէս բացայայտ է որ մարդը, նաև առանց կարևոր յարաբերութեանց մէջ մտնելու իւր նմանեաց հետ, կը խօսի ինքն իրեն քարձրածայն, կը հրամայէ ինքն իրեն շարժուիներով, կ'երգնու ինքն իրեն ձեռքը երկարելով, իբրև թէ հաստատելու համար ինքն իրեն իւր մտածումը, իր սեփական կամքը և իր երզումները:

Անցէ՛ք հիմա բնութեան կարգէն շնորհաց կարգին. պիտի գտնէք միևնոյն օրէնքը, միևնոյն պատճառը:

Ինչպէս որ բնութեան կարգը հիմնուած է արտաքին նշանակաց ամբողջութեան

մը վրայ՝ որոյ պէսպիսութիւնը անսահման է, չնորհաց կարգը՝ որ բնաւ չեղծաներ բնական կարգը, այլ կը նուիրագործէ զայն, կ'աշխուսեն ու կը կատարեալագործէ, պէտք է որ ունենայ համեմատական նշաններու յօրինուածութիւն մը որ ըլլան իբրեւ կրօնքին մարմինը:

Հոս կը գտնէք դուք մի և նոյն միութիւնը երեւելին ու նիւթականին՝ հոգեւորականին ու աներևոյթին հետ, բայց իր աւելի վսեմ և աւելի հիասքանչ բացատրութեան մէջ: Այս միութիւնը նմանութիւն մըն է՝ թէև տկարացած, մարդկային բնութեան ընդ աստուածային բնութեան՝ յանձին Մարդ-Աստուծոյ Ամէն հրամանակարգ Վարդապետութիւնը զայն կը յիշեցնեն կամ կ'արտադրեն. Մարդեղութիւնը կերպով մը կը շնորհուի հազարաւոր այլևայլ ձևերու ներքեւ, ամէն կողմէ կը հառաքայթէ այն և կ'ըլլայ այն զգալի ու մնայուն երկրիս վրայ՝ ամէն պատկերներու և ամէն խորհրդանշաններու մէջ մի և նոյն ճշմարտութեան կրկնութեամբը:

Ուստի ինչպէս որ բանն Աստուծոյ մարմին եղաւ՝ մեզի նման մարմին մը և հոգի մը առնելով և երկրաւոր տարրը միաւորելով երկնաւորին, իւր խօսքն ալ՝ մըշտորն շինաւորապէս մնալու համար մարդոց մէջ, մարմնաւորեցաւ Եկեղեցւոյ ձայնին մէջ հաստատուն կերպով մը անոր հետ անբաժանելի ամբողջութիւն մը կազմելու համար: Մի և նոյն մտածումն է, մի և նոյն միութիւնն է որ դուքս կուգայ ու կը փայլի խորհրդոց մէջ: Մարդեղութեան ամբողջ տնտեսութիւնը հոն կը գտնուի:

Ահա անոր երկու տարբերքը. երկրաւոր տարր ու երկնաւոր տարր, զգալի նշանն ու հոգեւորական իրը: Երկրաւոր տարրը՝ մկրտութեան ջուրն է, սուրբ օծութեանց լազն է, Ս. Հաղորդութեան հացն ու գինին է. երկնաւոր տարրը՝ շնորհքն է որ կը հեղու հոգւոյն մէջ՝ նիւթին միջոցաւ՝ խօսքի աղբեցութեան ներքեւ:

Ինչպէս որ Բանին աստուածութիւնը իւր մարդկութեամբ ամէն շնորհք արդիւնաւորեց ըրոր մարդկային ցեղին համար, այսպէս ալ խորհրդոց նիւթական տարրովն ու ձևովը իւր առատ արդիւնքները կը հաղորդէ ու կը մերձեցնէ այն ամէն մարդոց որ արժանաւորութեամբ կ'ընդունին խորհուրդներն: Եւ այս իմաստով խորհուրդները մէկ շարունակութիւնն են Յիսուսի Քրիստոսի Մարդեղութեանը:

Ընդունէ՛ ուրեմն, ո՛վ մարդ, ընդունէ՛ և օրհնէ՛ այս գերափառ նշանները, տեսանելի գործիչներ Աստուծոյ շնորհաց, գործիքներ իւր Մարդեղութեան, խողովակներ՝ որոնցմէ կ'իջնէ ու կը տարածուի այն Արիւնն որ փրկեց զայնարհ Դու զգայաբանաց ստորուն ես, ուստի քեզի համար կարեւոր են պղալի դարմաններ, և ասոնք են միայն որ կը յարմարին քու նիւթոյդ, մասնաւորապէս իբր ստորանկեալ Դու ամբարտաւանութեան խաղալիքն ես, ու կ'անգիտամաս նոյն իսկ քու տկարութիւնդ, պէտք է ուրեմն որ հպատակիս տեսնելու քիչ մը ջրոյ, իւղի, հացի մէջ, առանց խօսելու միւս խորհրդոց վրայ, — միով բանիւ՝ ամենէն հասարակ և ամենէն ընտանեկան մարմնաւոր բաներու մէջ՝ բժշկութեան գործիքներն և նոյն իսկ կեանքի աղբերակունքը խոնարհեցու՛ր գլուխդ այս պատկերներու առջև, և ըրած պիտի ըլլաս բանաւոր վսեմ գործ մը: Անոնք կը յիշեցնեն քեզ քու անկումդ և քու հպատակութիւնդ. զքեզ կը վարժեցնեն խոնարհութեան. կը ստիպեն զքեզ գործածելու ստորին և զգալի տարրները՝ վերանալու համար նիւթականէն առ հոգեւորն, տեսականէն առ անտեսանելին, թեւակոխելու համար ի բարձունս, և այսպէսով վերստանալու համար Աստուծոյ որդւոց ազատութիւնն ու պատիւը:

(Ծառուկալի)

ԱՁԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԲԱԿԱՆ ՍԻՆԵԶՈՂՈՍ

Ի ՀՌՈՎՄ

Roma e l'Oriente պարբերական թերթը իւր 11 թուոյն մէջ մեր Սիւնհոգոսին կը նուիրէ առաջնորդող յօդուած մը, զոր արժան կը դատենք թարգմանել, մեր ընթերցողներուն ծանօթացնելու համար այն գեղեցիկ և մեղի պատուարներ գաղափարներն որ անոր մէջ կը պարունակուին: Սիւնհոգոսի գումարումը հրամայող Քահանայապետական թուղթը նոյնութեամբ դնելէ վերջը, զոր մենք հայերէն թարգմանութեամբը դրած ենք Արձագանգիս 137 թուոյն մէջ, այսպէս կը խորհրդածէ վերոյիշեալ թերթը.

« Քահանայապետական այս կարեւոր վաւերաթուղթը, որ ուղղուած է Հայոց հոյակապ ազգին կաթողիկէ Պատրիարքին, Արքեպիսկոպոսներուն ու Եպիսկոպոսներուն, նիւթ կը մատակարարէ մեզի՝ քանի մը համառօտ խորհրդածութիւններու, որոնց վրայ կը փափաքէինք որ Արեւելեան Եկեղեցւոյ ամէն չմիաբանեալներն՝ որ ազգի ալ պատկանելու ըլլան, անկեղծութեամբ և առանց կրքի ուշադրութիւն դարձնեն: »

Անոնք՝ այո՛, պատմութիւնը վկայութեան կը կոչին՝ արդարացնելու համար Հռոմայ Ս. Աթոռէն իրենց բաժանումը, և ողբալի ու իրենց Եկեղեցւոյն համար այնքան վնասակար հերձուածին մէջ յարատեւութիւնը. և ահա Յիսուսի Քրիստոսի Եկեղեցւոյն գերագոյն Դիւանոյն նոր յիշատակադիրը ուրիշ պատմական դէպք մըն է որ կը միանայ նախնութեանը՝ ապացուցանելու համար այն հայրական փութկոտութիւնը և անշահախնդիր սէրը զոր Հռովմէական Աթոռը կը սնուցանէ դէպ առ Արեւելեան Եկեղեցիները, զորս, ինչպէս բոլոր ուրիշները, կը նկատէ Նա իբր Յիսուսի Քրիստոսի ընդհանրական Եկեղեցւոյն անգամներ, յանձնուած Պետրոսի ու անոր Յաջորդներուն, և միւսներուն պէս զանոնք ալ կը սիրէ և անոնց բարիք կը հայթայթէ:

Հայ կաթողիկէ Եկեղեցին հիմա ճգնաժամ մը կ'անցունէ, որ կրնայ ամենածանր հետեւութիւններու առաջնորդել: Մեր ընթերցողները, թերթիս Յուլիոս 25 թիւն կարգացած ըլլալով, գիտեն արդէն թէ աշխարհականներէն ոմանք, նախկին Պատրիարք Պետրոս ԺԲ.ին կերպով մ'ընդունել տուած ըլլալով ազգային ժողով մը՝ գրեթէ ամբողջութեամբ աշխարհականներէ կազմուած, այս ժողովը՝ առանց ինկատի առնելու կանոնա-

կան ոսանմանները, փորձ փորձեց Կաթողիկէ Պատրիարքութեան վարչութեան մէջ մուծանելու տանամանադրական ձեւը, իրեն վերագրելով ամէն օրէնսդիր իշխանութիւն, հաւե կրօնական նիւթի մէջ, և թողով Պատրիարքին ու Եպիսկոպոսաց մի միայն գործադիր իշխանութիւնը: Որով, գրեթէ ամբողջովին աշխարհական ու աշխարհականացնող ժողով մը այս եղանակաւ ինքը զինքը պիտի հաստատէր միակ ձեռնհաս իշխանութիւն Եկեղեցւոյ վարչութեան, Պատրիարքի ընտրութեան և անոր ու Եպիսկոպոսանքու վրայ հսկողութեան մէջ:

Նոր Պատրիարքը՝ ո՛չ առանց ծանր գոռարութեանց ընտրուելով, երբ այդ ժողովոյ անդամոց ներկայացաւ իրենց մէկ մասնախումբէն պատրաստուած ծրագիր մը, փորձեց՝ թէ և անօգուտ կերպով, ջոյց տալ անոր սպօրինութիւնը և ծանրապէս խրատեց և յորդորեց, և երբ եկեղեցական իշխանութիւնը իւրացնել նկրտող ժողովոյն կողմանէ գործուեցան անհաղանդութիւն, Եպիսկոպոսական Նուիրապետութեան դէմ սպառնալիքներ և փորձեր ընդունել տալու համար գործադրութիւնն այն ծրագրեալ կանոնագրին որ հակականոնական կերպով կը միտէր հայ Կաթողիկէ Եկեղեցին աշխարհականացնելու, շայն ատեն Պատրիարքը դատապարտեց ռզգային կոչուած ժողովը, խնդր տալով սակայն փոխանակ անոր վերակազմելու Նախկին Աւագանւոյ ժողովը, հասարակութեան պարգտապէս քաղաքական գործերուն համար, և միայն ճանչցուած կառավարութիւնէն:

Պատրիարքի այս արարքին պատասխանն եղան բացայայտ սպառնալութեան գործեր: Խռովարար կը յամառին իրենց յաւակնութեանց մէջ, ժպրհութիւնը կ'աւելնայ, բռնութիւններ կը կատարուին, ծախիչ կրակ մը կը բորբոքի Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ ծոցին մէջ, որուն մէջ զօրաւոր կերպով կը փչեն հերձուածող օրագիրներ, և կատարեալ կործանում կը սպառնայ անոր:

Այսքան ծանր դէպքերու տռջե կը յուզուի Հռովմայ Քահանայապետը, և ի նկատի առնելով այն Եկեղեցւոյն ճգնաժամային պայմանները, կը հրամայէ որ ի Հռոմ իսկ և իր աչաց տակ գումարուի Հայ Նուիրապետութեան Սինոդոս մը՝ անհաւանալնութիւններու բողոքները... խղելու, իրաւանց վիճաբանութիւններուն առջեւ առնելու, եկեղեցական բարեկարգութիւնը ամրապնդելու: Եւ պատմութիւնը անգամ մըն ալ կ'արձանագրէ թէ Մայր և գլխաւոր Եկեղեցւոյն հետ միացած Եկեղեցիներն՝ միշտ կը գտնեն ի նմա անքուն պահապանն իրենց պատուոյն և իրենց արժանաւորութեան, պաշտպանն իրենց իրաւանց, զգնականն փրկեց կարօտութեան մէջ:

Եւ այս Քահանայապետական յիշատակագիրը յինքեան միայն պատմական գէպք մը չէ, այլ նաեւ կը յիշեցնէ, այս գիպուածիս մէջ Արեւելեան Հայ Եկեղեցիին նկատմամբ, ինչ որ յայսմ մասին պատմութիւնը ցարդ ունի արձանագրած: Սեղբետորոս Քահանայապետը Եւգենիոս Դ., Ուրբանոս Ը., Բենեդիկտոս ԺԳ., Գրիգոր ԺԶ., Պիոս Ը., Պիոս Թ., Լւոն ԺԳ., այլեւայլ առիթներու մէջ սիրալիր հոգ ունեցած են այն Եկեղեցւոյն վրայ և ցոյց առած են անոր իրենց սէրը՝ թէ՛ վերահաշտեցնելու համար զայն կրօնական Միութեան, թէ՛ կարգադրելու համար անոր կղերը, թէ՛ վերահաստատելու համար Պատրիարքական սրժանապատուութիւնը և պաշտպանելու անոր ազատութիւնը, և հայթայթելու համար ինչ որ անոր լաւոյն, ապահովութեան ու պարծանքին օգտակար է:

Եւ այն որ ծայրագոյն Քահանայապետը կը յիշէ իբր պատմութիւն Հռովմէական Աթոռոյ խնամքներուն և պործերուն՝ յօգուտ Հայ Եկեղեցւոյ, եթէ անկողմնակալութեամբ ուսումնասիրուի պատմութիւնը և Հռոմայ Եկեղեցւոյն չվերադրուին այն վնասները զորս առանձնականք կամ քաղաքական իշխանութիւնք ըրած են Արեւելցոց, ինչպէս կը յիշուի տարիգրոց մէջ Լատինաց մասին, այն ասեմ բացայայտ պիտի տեսնուի որ Հռովմէական Եկեղեցին միշտ տածած է յարգութիւն և սէր՝ Արեւելքի ամէն Եկեղիցիներուն համար, միշտ պաշտպանեց անոնց իրաւունքները, և եթէ իրմէն բռնադատներն իրեն կը կոչէ, զայս կ'ընէ միայն անոնց վրայ ի գործ դնելու համար մայրական գորովագութ սիրոյ պաշտօնը, և Յիսուս Քրիստոսէ ընդունած հրամանը՝ ամէն Եկեղեցիներու հիմն ու նեցուկն ըլլալու:

(Շարունակելի)

ՔԱՆՈՒՄԱՅԵՐԱՅԻՆ ԱՆՍԻՄԱԼԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱՐԵՆԱՐԳՈՒԹԻՒՆ

« ՃՇՄԱՐԻՏ ԿԱԹՈՂԻԿԵՆ »

սրբապատմական մը

(Շարունակութիւն)

Երանօթ է պատմութեան մէջ Փոտի անվաւեր և հակականոն ընտրութիւնն ի պատրիարք Պոլսոյ 869 ին ատենները, փոխան Իգնատիոսի, որ օրինաւոր հովիւն էր այն Եկեղեցւոյ՝ Փոտ՝ աշխարհական մարդ մը,

գաւաղիւր կ'ըլլայ իր Հայրապետին, զայն աքսորել կուտայ ու տեղը կ'անցնի: Ինքզինքը Պատրիարք հրատարակելէն վերջ իր կողմը կ'ուզէ ձգել Նիկողայոս Ա. Հռովմայ Քահանայապետը հաւատքի գաւառութիւն զրկելով անոր և նոյն իսկ հպատակութիւն խոստանալով. Նիկողայոս կը մերժէ զայն, զահնկէց կ'ընէ, կը հռչակէ ու կը վճռէ Իգնատիոսի օրինաւորութիւնը և իրաւունքը: Գիտենք ինչ վերջ կ'ունենայ այս խնդիրը. Փոտ կ'ապստամբի Քահանայապետի դէմ և յետոյ հերձուածէ հիւրեւիկոսութեան կ'անցնի, վարդապետական խնդիրներ հանելով Հոգւոյն Սրբոյ վրայ և այսպէս կըսկսի արեւելքի մէջ պառակտումը: Թողով մէկդի Հոգւոյն Սրբոյ ի Հօրէ և յՈրդւոյ բխման խնդիրը, ո'չ ոք կրնայ տարակուսիլ թէ Փոտի օրինաւոր ու ճմարիտ հովիւ չըլլալու և ընդհակառակն Իգնատիոսի օրինաւոր և իրաւացի հովուութեան խնդիրը՝ տարողշովին բարեկարգական և նոյն իսկ մասնակի բարեկարգութեան խնդիր մ'է. այսու հանգերձ անոր մէջ յԱթոռոյ կը խօսի Նիկողայոս և Ագրիանոս Բ. իբրեւ Բժիշկ ընդհանրական, Աստուծոյ դրօշմ աւելնուն փրկութեան հոսանք, ինչպէս կ'ունուանէր Իգնատիոս իր նամակին մէջ, ՅԱԹՈՒՈՅ կը խօսի այս խնդրոյն մէջ, իրաւանց և արդարութեան անսխալ պատգամաւորը, կը դատաւարտէ Փոտը իբրեւ յափշտակիչ և կը հրատարակէ Իգնատիոսի իրաւունքը, կը գումարէ Ը. Տիեզերական ժողովը և անոր վճռոյն նիւթ կ'ըլլայ նոյն խնդիրը և կը փակուի. այս որոշողութիւնն նիւթ է նաեւ այն հաւատոյ Դաւանութեան, զոր Ուրբանոս Ը. արեւելեայց համար սահմանած է և մինք պարտաւոր ենք ընել ստեն ատեն. հոն կ'ըսենք. ընդունիմ « զհոսանքն իգնատիոսի յորհորդն, ըս կարգի ուրբանոս, եւ ԴԱԻԱՆԻՍ (տա հաւատքի առարկայ կ'ըլլայ բարեկարգական խնդիր մը) զի անդ Փոսիոս իրաւաբ դասաւարտեցաւ. եւ սուրբ Իգնատիոս Պատրիարք վերստին հաստատեցաւ յարո իւր »: (1)

Եւ այս բարեկարգական կէտը, որ հաւատքի առարկայ կըլլաւ, յորում Քահանայապետին, Եկեղեցին յԱթոռոյ խօսած է, փոխիւնելի չէ բնաւ և այնքան անփոփոխելի է, որքան իրաւ է թէ « Այո՛ն Այո՛ է և Ո՛չն ոչ »: Ուստի ըսածնէս վերջ տրամաբանութիւնը կը բաւէ ապացուցանելու

(1) Մօտ ժամանակներս՝ մեր Հաւատարակութեան մէջ իսկ այսպիսի դէպք մը պատահեցաւ, երբ Նոր-Հերձուածողներն մերժեցին Երջանկայիշատակ Հասան Պատրիարքին ընտրութեան վաւերականութիւնը, և Ժպրհեցոյն հակաթոռ մը դնել. սոս ատեն Սրբազան Քահանայապետը առանձինն թղթով մը յԱթոռոյ խօսելով ՎՃԻԵՅ թէ անոր ընտրութիւնը վաւերական էր և ԴԱՏԱՊԱՐՏԵՅ հերձեալներուն յանդուգն մուրթութիւնը: ԲԱՐԵԿԱՐԳԱԿԱՆ կէտ մըն էր որ յԱթոռոյ խօսուելուն համար ԱՆՍԻԱՆ կ'ըլլար:

համար թէ բարեկարգականը յորում յԱթոռոյ վճիռ կայ, հաւատքի կէտ է և մաս, և անոր մէջ Քահանայապետը անսխալ է ինչպէս 'ի հաւատոյս և 'ի բարոյս: Ուստի ողջամիտ է Տեսութիւնը երբ կ'ըսէ թէ Քահանայապետն անսխալ է 'ի հաւատոյս, 'ի բարոյս, և 'ի բարեկարգականս՝ երբ յԱթոռոյ կը խօսի:

Բայց հնութեան դիմելու պէտք չկայ ըսածնէն հետեւեալ համար. Արդիականաց խնդիրը տակաւին չատ թաղմ է. Քահանայապետն Պիոս Ժ. իր վճռական ձայնը բարձրացուց և յԱթոռոյ խօսեցաւ և դատաւարութեամբ վարդականը իբրեւ աւսուածաբան, փիլիսոփայ, պատմաբան, ջաշագոյլ և քրեկէզէլ, հռչակեց անոր գէտ, ո՛չ միայն հաւատքի սամեանիմական ճշմարտութիւններ, այլ նաև բարեկարգական սկզբունքներ զորս ուրանալ համարժէք է հաւատքն, զեկեղեցին, զՔրիստոս ուրանալու: Ինչ կը պահանջէ բարեկարգից արդիականը. — Եկեղեցական գիտութիւնները կ'ուզէ որ իր ոճովը աւանդուի, մանաւանդ պատմութիւնը և քրիստոնէական վարդապետութիւնը. կ'ուզէ որ եկեղեցական պաշտամունքները վերածուին ըստ իր քմաց. կը պահանջէ մանաւանդ, որ եկեղեցւոյ վարչութիւնը բամկավարական ըլլայ և անոր մէջ տեղ տրուի նոյն իսկ աշխարհական *ipsisque laicis suae in regimine partes tribuendae*. Կ'ուզէ որ Հռովմայ Ս. ժողովներն փոխուին ըստ իր հաճոյից. եկեղեցւոյ քաղաքական ու ընկերական գործունէութիւնը վտարուի հրապարակէ. քահանայից կուսակցութիւնը վերցուի են: Ո՞վ չտեսներ որ ասոնք իրօք բարեկարգական խնդիրներ են և զուտ բարեկարգական, այստեղ հանդերձ ասոնց գէտ Պիոս Ժ. յԱթոռոյ վճռական ձայնը բարձրացուց, այդ պահանջները դատաւարաց և բոլոր ճշմարիտ կաթողիկէ աշխարհը իբրեւ անփոփոխելի վճիռ, անսխալ պատգամ ընդունեցաւ Պիոս Ժ. ի *Pašcendi gregis*; որ գլուխ գործոց մի է եկեղեցական հրովարտական մէջ: Այսպէս ուրեմն ընդունելու է թէ Ս. Քահանայապետը անսխալ է նաև 'ի բարեկարգականին. և ինչպէս կան պատմական դեպքեր իսկ որոնց մէջ եկեղեցին յԱթոռոյ խօսելով կամ Աստուած ինքն զանոնք հաւատքի հիմ դնելով, վարդապետական գէպեր կ'ըլլան (*facti dogmatici*), այսպէս ալ կան բարեկարգական կէտեր, զորս աւելի վերական ժողովոց և Քահանայապետաց վճիռներն հաւատքի առարկայ ըրած են:

Այս ըսածնէն վերջը դիւրին է պատառախանել նաև Պատմաբանին, որ ձայնակցելով ճշմարիտ կաթողիկէին, կը համրէ քահանայապետական կարգադրութիւններ Պատրիարքի և Եպիսկոպոսաց ընտրութիւնաց մասին, ո-

րոնք իրարմէ տարբեր են. հետեաբար կը գտնուի յազմանակաւ ինչպէս
անախալ կ'ըլլայ Քահանայապետը՝ ի բարեկարգականին երբ կը փոխէ յա-
րատե իր տրամադրութիւնները: — Այդ փոփոխութիւնը և փոփոխելիաւ-
թիւնը, ապացոյց են և երեսն կը հանեն անփոփոխ կէտեր մը, որոնք
բարեկարգական ըլլալով մէկտեղ և բարեկարգութեան հիմն, հաւատքի
մասեր են, յորս յԱթոռոյ խօսած են Քահանայապետը և Վ. բարեկար-
գութեան փոփոխելի մասերն, փոփոխելի են, որովհետեւ Քահանայապետը
Ինքնաշնորհ, ճիշտ-Ինքն, Իրաւունք ունի զանոնք փոխելու երբ ուզէ. ո՛ր և է ազ-
գային իրաւունքը չկրնար սահմանել, խափանել, ջնջել այդ իշխանութիւնն
և իրաւունքը. 2. անոնք (փոփոխելի կէտեր) կը փոխուին «յի ԿԵՐԷՆ ԵՐԷ
Քահանայապետը կ'ուզէ. 3. գարձեալ կը փոխուին և կրնան փոխուիլ ՄԻԱՅՆ
«յի ԿԵՐԷՆ, որով կ'ուզէ Քահանայապետը. 4. վերջապէս ո՛ր և է փոփոխու-
թիւն, զոր Քահանայապետը չուզէ և չտրամադրէ կամ որ տեղի ունենայ
ԵՐԷ Քահանայապետը չուզիր և կամ մուծուի «յի ԿԵՐԷՆ, որով ուզած չէ և
չուզիր Քահանայապետը, բացարձակապէս անկանոն, անտեղի, անիրաւ
փոփոխութիւններ են, որոնք իրաւունք և օրէնքի առջև գոյութիւն չունին:

Ուստի բարեկարգական մասնակի կէտերու փոփոխելիութիւնը եր-
րեք ջնուադեցներ մեր սկզբունքը, այլ զայն կը հաստատէ, կը բացատրէ,
կ'ապացուցանէ այնպէս ինչպէս բնական կարգի փոփոխելի բնութեայթնե-
րը կը պատմեն մեզ աստուածային անվիճելի նախախնամութեան ու վար-
չութեան անփոփոխելի օրէնքն ու իրաւունքը և գոյութիւնը տիեզերաց
մէջ: Ո՞վ կրնայ յանգգնիլ ըսելու թէ աստուածային նախախնամական
վարչութիւնը փոփոխական է և հետեաբար սխալական, որովհետեւ արա-
րածոց մէջ երկրորդական կարգի բնութեայթնիւն փոփոխելի են և կը փո-
խուին ու պիտի փոխուին քանի որ շարժում ու կեանք կայ տիեզերքի
ծոցը: Ո՛չ, այդ փոփոխելիութիւնը պատահական չէ, Աստուծոյ է և ան-
կից ուզուած, կարգադրուած, որովհետեւ Նա գերազանցօրէն ինքնիշխան
է, բացարձակ Տէր տիեզերաց: Համեմատաբար ըսենք Քահանայապետական
իշխանութեան մասին, որնոր Եկեղեցւոյ աստուածային հիմնադրին կամօք
և կարգադրութեամբ, լիազօր է, ինքնիշխան է, ու չկրնար կապտուիլ,
որովհետեւ ի հաւատոց է առ, թէ և բարեկարգական սկզբունք, որ Քահա-
նայապետն Հոռվմայ Եկեղեցւոյ մէջ իրմէ վեր իշխանութիւն չճանչնար,
բայց միայն Աստուծոյ և Աստուծոյ իշխանութեան ամենակատարեալ հա-
ղորդակցութիւն է, որ տրուած է մարդու մը երկրիս վրայ, հետեաբար

անկից կախում ունին և միայն անով կրնան շարժիլ բարեկարգականի ա-
մէն փոփոխելի կէտերն եկեղեցւոյ մէջ:

Այս ամենէն վերջ աւելորդ չըլլայ մէկ երկու խրատ ճշմարիտ կաթո-
ղիկէին. 1. որ Քահանայապետաց նոյնիսկ փոփոխելի կէտերու վրայ
վճիռներն ակնածանք, յարգութիւն և լիուլի հնազանդութիւն կը պահան-
ջեն. հետեւեալ ասոնց դէմ ապստամբութիւնը և ընդվզումը ծանր մեղք
են և եթէ իշխանութեան սկզբունքի դէմ ըլլային՝ հետձուած կը հանին,
ինչպէս յԱթոռոյ վճիռներու դէմ ապստամբութիւնը հերետիկոսութիւն կը
ստեղծէ. 2. գրութիւն մը քննելու ատեն պէտք չէ գրողներու անձ նկա-
տի առնուլ, այլ գրուած նիւթը, երբ մանաւանդ գրողներն չեն ուզած
յայտնուիլ. անձինքը երգիծանել ճշմարիտ կաթողիկէի տեսութեան ուժ
չաւելցնել. 3. Հոսով տրուած Աստուծաբանութեան Docteurի վկայագիրը՝
ընդունողէն չէ որ արժէք ունի այլ տուողէն և այս Ս. Աթոռն է և ի յար-
գանս Ասոր մեր աղգային Սինոդոսներն ալ պատուով վերաբերուած են այս
գիտական պատուատիճանին հանդէպ. ուստի ճշմարիտ կաթողիկէն կրնար
գէթ լռելեայն անցնել այդ մասին փոխանակ ենթադրելու այդ պատիւը
Տեսութեան հեղինակաց կամ հեղինակի վրայ, զանոնք ծաղրելու համար.
4. կաթողիկոսի մը այսց առջեւ գրի առնուած գրութեան մը հանդէպ (ինչ-
պէս ինքը կ'ենթադրէ) կարծենք քիչ մը աւելի զգուշաւոր շարժելու էր
և փոխանակ իր դիտողութիւնը մեր արժանաւոր կաթողիկոս Պատրիարքի
դէմ թշնամի կանգնած թերթի մը վրայ հրատարակելու, կրնար նոյն իսկ
իր ենթադրած հեղինակներուն ուղղել, որոնք պատրաստ են ամէն պա-
րագայի մէջ իրենց սխալը ուղղելու նոյն իսկ հրապարակաւ թէ հարկը
այսպէս պահանջէ:

ՓՈՂ

Փ. Պիսակի

Տնօրէն Պատասխանատու

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ազգային Պատրիարքական Սինոդոս ի Հոռիմ	էջ 277
Բարոյ Ս. Խորհրդոց վրայ	» 278
Roma e l'Oriente եւ Ազգային Պատրիարքական Սինոդոս ի Հոռիմ	» 282
Քահանայապետի Անպատրաստութիւն եւ Բարեկարգութիւն	» 284

